

մէջ իրեն Տեսուչ և Լուսարարացեալ, որուն բարի տրամադրութիւնները ծանօթ էին Ազգին, վասնզի խմատութեամբ վարած էր հաստատութեան ղեկը՝ Ս. Աթոռին թափուր եղած միջոցին: Շնորհակալութիւն յայտնեց ամէնուն ալ, իր միաբանակից բոլոր եղբայրներուն, թէ՛ անոնց որ նախկին սերունդին կը պատկանէին, և թէ՛ անոնց որ նոր սերունդը կը կազմէին և իր նախորդին աշխատութեանց արդիւնքներն էին: Շնչտեց սակայն՝ թէ ինք այդ տրոհումը պատահաբար միայն կ'ընէր այդ տեղ. վասնզի վստահ էր թէ ամէնքը կապուած էին միեւնոյն սիրով, և միեւնոյն զգացումներով է որ զինք կը շրջապատէին գործի այս ասպարէզին մէջ:

«Ամէնքս միասին է որ պիտի կատարենք, ըսաւ, այն հսկայ գործը որ ձեռնպէս միայն Պատրիարքէ մը կը սպասուի, այլ իրականութեան մէջ ամբողջ Միաբանութենէն»:

Դարձեալ կը յայտնէր իր սէրը այս հաստատութեան, իր Ազգին և «մանաւանդ, յարեց, քնդի հանդէպ ներկայ Հայ ժողովուրդ, որ կը ներկայացնես այն տասանորդուած բայց բնաւ չվհատած Ազգը, որ թէև զրկուեցաւ ամէն բանէ, բայց անապատին մեծութեանը մէջ ալ ինքն իրեն շինեց իր Եկեղեցին»:

Ըսաւ՝ թէ հանդիսականները եկած էին մեծարանք մատուցանելու Հյց. Եկեղեցւոյ Միութեան, Սրբութեան և այն Ոգիին որ կանգուն պահած էր այս Ս. Աթոռը: Անոր համար ամէնէն աւելի պարտականութիւն կը զնէր ամէնուն վրայ ալ՝ որ անշէջ պահէին Հյց. Եկեղեցւոյ սէրը իրենց կուրծքերուն տակ: «Իրաւունք ունէր Որիմեան Հայրիկ երբ կ'ըսէր թէ Հյց. Եկեղեցին «Հայ Ազգին խղճմտանքն է»: Անոնք (հանդիսականները) որքան աւելի սիրէին այդ Եկեղեցին՝ այնքան աւելի ծառայած կ'ըլլային այն գաղափարին՝ զոր կը մարմնաւորէր ան:

«Սիրեցէք այս Ս. Աթոռը, յորդորեց, որ Հյց. Եկեղեցւոյ ամէնէն աւելի պատուականագոյն հաստատութիւններէն է»:

«Կեցցէ Ազգը.

«Կեցցէ Հյց. Ս. Եկեղեցին.

«Կեցցէ Առաքելական Ս. Աթոռը»:

Այսպէս, Ամենապատիւ Գահակալին «Պահպանիչ»ով և օրհնութեամբ, փակուեցաւ յաւէտ յիշատակելի հանդիսութեանց այս օրը:

ՍՐԲ. ՊԱՏՐԻԱՐԿԻՆ ԱՅՅՐ ԻՐ ՀՈԳԵՄՆՈՂ.

ՆԱԽՈՐԴԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ

Երեսուցէմ հասած օրը (եչ.) երեկոյեան ժամերգութենէն ետք Սրբազան Պատրիարքը, ամբողջ Միաբանութեան անդամներուն, վարժարանի աշակերտներուն և բաւական թուով ժողովուրդի հետ փութացած էր իր յարգանքի և մեծարանքի տուրքը մատուցանել իր սիրելի Վարդապետին և նախորդին, երջանկայիշատակ Դուբեան Պատրիարքին, անոր շիրմին վրայ: Կատարուեցաւ հանդիսաւոր և սրտայոյզ հոգեհանգիստ: Սրբազանը հանգստեան աղօթքը կարդալու պահուն խորապէս յուզուած՝ յարտասուս փոփկեցաւ և չկրցաւ շարունակել իր ընթերցումը, զոր շարունակեց Տեղապահ Սրբազանը: Ուրախութեան օրը այս տխուր զրուագիւյթ վերջացաւ, երբ արդէն իրիկուան ստուերները կ'իջնէին:

ԱՌԱՋԻՆ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՐԱԳՐԸ

Սրբազան Պատրիարքին Գահակալութեան յաջորդ առաւօտուն՝ Ս. Պատարագը մատուց Դեր. Տ. Պետրոս Սրբազան, Ներկայացուցիչը Կիլիկիոյ Կաթողիկոսութեան:

«Դիրք»ին ընթերցումէն ետք՝ Սրբազան Պատրիարքին հանդիսապետութեամբ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Հանգուցեալ Դուբեան Սրբազան Պատրիարքին հոգւոյն համար:

«Եւս առաւելոյն առաջ Պետրոս Սրբազան խօսեցաւ պատշաճ ու իմաստալից քարոզ մը, ուր ընդհանուր ակնարկ մը նետուել ետք աշխարհի մէջ գործուող շարունակեանք և անիրաւութեանց և բարոյական անկումներու վրայ, ցոյց տուաւ թէ մեծ և բարի մարդոց շնորհիւ է որ մարդկութիւնը և քաղաքակրթութիւնը կերպով մը կը յաջողին շարունակել իրենց գոյութիւնը: Ինչպէս բոլոր ժողովուրդներու՝ նոյնպէս Հայոց մէջ ալ գտնուած են արի մեծ մարդիկ, որոնցմով մեր ժողովուրդը կրցած է ազդիլ, Ս. Աթոռն ալ յատուցած և տուած է Հյց. Եկեղեցիին սրբականց և մեծագործ պատրիարքներ, ինչպէս Պարոն Տէր, Շղթայակիր, Վեհապետեան և ամէնէն վերջ՝ Դուբեան:

Այդ մեծ ու պատուական գահակալներու արժանաւոր յաջորդն է որ Սրբազան քարոզիչը շնորհաւորելու երջանկութիւնը կ'ունենար, և սրտազին բարեմաղթութիւններով վերջացնել ետք իր խօսքերը՝ զարձաւ և առաջին անգամ յիշատակեց Սրբազան Պատրիարքին անունը՝ «Եւս առաւելոյն ասեմ»:

Նոյն օրը հրահանգներ տրուեցան Ս. Աթոռոյս բոլոր թեմերուն որ հանգստեան կատարուի նախորդ Պատրիարքին հոգւոյն համար ու նոր Պատրիարքին անուան յիշատակութիւնը սկսուի:

ՀՐԱՒԻՐԱԿՆԵՐՈՒ ՄԵԿՆՈՒՄԸ

Ս. Աթոռոյս Հրաւիրակները՝ որոնք պաշտօն ունէին Ս. Աթոռոս առաջնորդելու արժանւորութիւնը Պատրիարք Ամենապատու Տ. Թորգոմ Ս. Արքեպիսկոպոս Գուշակեանը, Գահիրէ մեկնեցան նոյ. 5-ին, առաւօտեան կառախուժելով:

Հրաւիրակ Մարմինը կը բաղկանար Ս. Արքեպիսկոպոս Գ. Պոլսոյ Պատր. Փոխանորդ Գեորգ. Տ. Սմբատ Ս. Նախկապոս Գաղաղեանէ նախագահ, եւ Հոգ. Տ. Տ. Կիրեղ Բարալիւան եւ Նորայր Պողոսեան Վարդապետներէ:

ՍԱՐԱՃԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Նոյնմբեր 9-ին Հայֆայի ուղեգծով Սիւրիայէն տեղա ժամանեց Կիպրոսի Հայոց Առաջնորդ Գեորգ. Տ. Պետրոս Ս. Արքեպիսկոպոս Ստրանեան, որ ի դիմաց Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայ գտնուեցաւ Ս. Աթոռոյս արժանւորութիւնը Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Ս. Արքեպիսկոպոս Գուշակեանի Գահակալութեան հանդիսութեանց:

Տ. Պետրոս Սրբազան Վանուցա Աւագ-Դոնէն Հրաշափառելով առաջնորդութեան Ս. Յակոբեանց Մայր Տաճարը, ուր իր ուխտը կատարելէ յետոյ թափօրով ուղղուեցաւ Պատրիարքարանի Դահլիճը, ուր Տեղապահ Սրբազանը ներկայացուց Նորին Սրբազնութեան՝ Միաբանութեան հոգեւորական Նոր անդամները:

ԶԻՆԱԴԱԴԱՐԻ ՏԱՐԵԴԱՐԱԶԸ

Այս տարի ալ Մեծ-Պատերազմի Զինդադարի Ցարեղաճինէն առիթն առնելով նոյ 11 առաւօտեան ժամը 8-ին Հոգեւորականութեան Պաշտօն տեղի ունեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Տեղապահ Սրբազանին, մասնակցութեամբ Միաբանութեան եւ ի ներկայութեան հաւատացեալ ժողովրդեան:

Նոյն օրը ժամը 10-ին Պատր. Տեղապահ Սրբազանը, հետեւ ունենալով Դիւանապետ Տիար Կ. Նուրեանը այցելեց Զինեման Լեւոն Անգլիական Զինուորական Կերակրանքատունը, եւ ըստ սովորութեան ծաղկեայ խաչ մը զետեղեց Զինուորական Յուշարձանին վրայ:

ՎԿԱՅԱԿԱՆԱՅ ԲԱՇԵՈՒՄ

Դարձեալ նոյն օրը, Տեղապահ Սրբազան հետեւ ունենալով Թարգման Հոգ. Տ. Պարգեւ Վարդապետը, ներկայ գտնուեցաւ Երուսաղէմի Անգլիական Ազգայնաց Վարժարանի շէնքի մասնաւորութեան մէջ զգացուց թէ լաւ եղած էին տալուորութեան իրենց հետեւ ծառայողները:

Այս տարուան շրջանաւարտներու կարգին մէջ կը գտնուէր միակ հայունի մը՝ Աֆիոն Գարահիւսարցի Սրբորդ Անիկի Խաչիկեան, որ Վարժարանի վկայականէն զատ ստացաւ նաեւ Քէմպրիճի վկայականը, մասնակցած ըլլալով անոր քննութեանց եւս:

ԲԱՐՁՐ ԿՈՄԻՍԵՐԻՆ ԺԱՄԱՆՈՒՄԸ

ԵՒ ԵՐԿՐԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Պաղեստինի Ռիտանական Նոր Բարձր Կոմիտէն Ասեմ. Սրբ. Արքեպիսկոպոս Գեորգ. Տ. Սմբատ Ս. Նախկապոս Գաղաղեանէ պատկան եւ զինուորական պատկաններով մինչ ինչ սաւառնակներ կը հախքէին օդին մէջ:

Նոյն օրը Բարձր Կոմիտեանքան ապարանքին մէջ տեղի ունեցաւ Նորին Վանուցեան պաշտօնին Արքայական Հրովարտակին ընթերցումը եւ Երգման արարողութիւնը, ի ներկայութեան Պաղեստինի Զինուորական եւ Քաղաքային Բարձրատնայն պաշտօնատարներու, կրօնական պետերու, Հիւպատոսական Մարմնոյն, եւ երեսն իններու:

Տեղապահ Սրբազանը, հետեւ ունենալով Դիւանապետ Տիար Կ. Նուրեանը, ներկայ գտնուեցաւ սոյն հանդիսութեան: Արարողութիւնը կարճ էր, բայց հետաքրքրական եւ տալուորիչ: Ներկայ էին շուրջ 300 ականաւոր անձեր:

Բարձր Կոմիտեանք հազած էր զինուորական կարմիր համազգեստ, դրած էր փետրաւոր ճերմակ սաղաւարտ, եւ ամբողջ կուրծքը ծածկուած էր պատուանշաններով: Իր ուխտը արտասանեց եւ յետոյ ստորագրեց զայն կարմիր փետուրով մը: Ապա Մեծ Դատաւորը ուղերձ մ'ըրաւ Բարձր Կոմիտեանքին ուղղուած, որուն յաջորդեց Սրբ. Վարդապետի ճառը:

Այս ճառէն ետք, բոլոր հանդիսականները պետական քարտուղարին կողմէ միառմի ներկայացուցեցան Բարձր Կոմիտեանքին, եւ ապա մեկնեցան:

Մեծ Դատաւորին ճառը կ'անկարելի էր Բարձր Կոմիտեանքի փառաւոր անցեալին, Պաղեստինի Կառավարութեան զփառութեանց, ինչպէս նաեւ Ս. Երկրի պատմական եւ կրօնական կարեւորութեան:

Բարձր Կոմիտեանք ալ իր պատասխան-ուղերձին մէջ զգացուց թէ լաւ եղած էին տալուորութեան իրենց հետեւ ծառայողները, որոնք ստացած էր առաջին վարժարանէն: Ըսած թէ երկիրը եւ ժողովուրդը օրինակ հարաւարտ մը ճանչնալ, եւ ինքզինքը նոյնացնել ինչպէս հետեւ ծառայող նախ պետքը եւ անհրաժեշտութիւնը կարգ ու կանոնին, առանց որոշունջ կարելի էր ընել, եւ երկրորդ՝ բարեկամացողութեան եւ իրերահապաքողութեան:

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Ս. ՊԱՏՐԻԱՐԳԻՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ՄՈՒՏԳԻՆ Ի Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ

Նորոգիւր Ս. Պատրիարքը իր առաջին մուտքն բրաւ ի Ս. Յարութիւն՝ Գեկտ. 5-ի շարաթ երեկոյեան կիրակամուտին: Այս առթիւ, ըստ սովորութեան, տեղի ունեցաւ «Հրաշափառ»ի հանդիսաւոր թափօր: Այդ իրիկունը բացառաբար մեր կողմէ զարդարուած էր Քրիստոսի Ս. Գերեզմանը. Յոյն և Լատին իրաւակից աղգերն ալ վառած էին իրենց բոլոր կանթիկները: Հակառակ եղանակը անծրեօտ ըլլալուն՝ ներկայ էր հոծ թափով հաւատացեալներու բաղմութիւն մը. կային նաև օտարականներ, որոնք եկած էին զիտիւս սոյն բացառիկ հանդէսը և տեսնելու նորընտր Պատրիարքը:

ԳՊՏԻ ՈՒԵՏԱԽՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ

Գեկտ. 6-ին Գահիրէէն քաղաքս ժամանեցին Գպտի երեք եպիսկոպոսներ, որոնք եկած էին Եթովպիոյ կայսերազուն իշխանը զիմաւորելու: Առաւօտուն երբ շողկեառքէն իջան, իրենց առաջին այցը կատարեցին Ս. Յարութեան Տաճարը: Երեսադէմի Գպտոց եպիսկոպոսին կողմէ Ս. Յարութեան Տաճարի Հայոց Տեսչութեան կանխաւ լուր տրուած ըլլալով, Հայոց Տեսուչը շօգ. Տ. Սուրէն վարդապետ Տաճարին դռնէն զիմաւորեց երեք հիւր եպիսկոպոսները և պատշաճ պատիւներով առաջնորդեց բոլոր Ս. Տեղերը: Ի պատիւ իրենց Հայոց կողմէ բացուեցան Տաճարին մեծ դրան վեղկերը, ու վառուեցան մոմեր եւ կանթիկներ: Եպիսկոպոսները իրենց սեպհական մատուռին մէջ պահ մը աղօթելէ վերջ՝ հրաւիրուեցան Հայոց Տեսչարանը, եւ հարկ եղած հիւրասիրութիւնը կատարուելէ վերջ՝ զո՛ւ սպաւորութեամբ մեկնեցան իրենց մօտակայ վանքը:

Գպտիներ Ս. Տեղեաց մէջ իբր Հայոց հետեակ աղգ ճանչցուած ըլլալուն համար է որ այսպիսի բացառիկ պարագաներուն Հայոց կողմէ պատիւներ կ'ընծայուին իրենց բարձրաստիճան հոգեւորականներուն և աշխարհականներուն:

ԵԹՈՎՊՈՒՆ ԳԱՀԱԺԱՌԱՆԳԻ ԻՇԽԱՆԻՆ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Գեկտ. 7-ին Առաւօտեան կառաչարով Եգիպտոսէն քաղաքս ժամանեց Եթովպիոյ Կայսրութեան Գահաժառանգ Իշխանը Ասֆաու Վոսան և առաջին առթիւ այցելութիւն կատարեց Ս. Յարութեան Տաճարը: Սր մը առաջ Գպտոց եպիսկոպոսին կողմէ Հայոց Տեսչին շօգ. Տ. Սուրէն վարդապետին լուր տրուած ըլլալուն, Հայոց Տեսուչը ապագայ զահակալը ընդունելու համար կատա-

րած էր հարկ եղած պատրաստութիւնները: Կայսերազուն իշխանը իր արքայական հետեւորդներով եւ աղգային խորհրդանիշը կրող երկու մեծ զրօշակներով, զգեստաւորեալ Գբպտի եպիսկոպոսներով, վարդապետներով և օտարականներով Ս. Յարութեան Տաճարի դրան երբ կը մօտենար, Հայոց Տեսուչը Տաճարին դռները բանալ տալէ ետք, տեղեայն միաբաններուն հետ զիմաւորեց Գահաժառանգ իշխանը և զայն իր հետեւորդներով առաջնորդեց գէպի Ս. Յարութեան Տաճարը: Իշխանը այցելեց Սրբափայրի բոլոր մասերը, որոնց մէջ նաև Ս. Յարութեան Տաճարին մէջ գտնուող Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, ուր աղօթեց: Ի պատիւ իրեն տեղի ունեցաւ ջահերու և կանթիկներու լուսավառութիւն: Ուխտաւոր Արքայազունը զո՛ւ սպաւորութեամբ մեկնեցաւ Հայէկնեբու մայրափանքը:

Ս. Տեղեաց մէջ Եթովպացիներ Հայոց հետեակ աղգ ճանչցուած ըլլալուն, անոնց ալ եկեղեցական ու աշխարհական բարձր աստիճանաւորները կ'ընդունուին և կը մեծարուին Հայոց կողմէ:

ՀԱՅԿԵՐՈՅԹ Ի ՊԱՏԻ ԵԹՈՎՊՈՒՆ

ԳԱՀԱԺԱՌԱՆԳ ԻՇԽԱՆԻՆ

Ըստ հրաւերի, գեկտ. 6-ի Գշ. օրը Ամեն. Ս. Պատրիարքը ներկայ գտնուեցաւ հացկերոյթին, զոր Ն. Վ. Պաղեստինի Բարձր Կոմիտէն տուաւ ի պատիւ Ն. Կայսերական Բարձրութիւն Եթովպիոյ Գահաժառանգ իշխանին, Բ. Կոմիտեբուսիւսին պալատին մէջ:

ՀԱՊԵՇ ԳԱՀԱԺԱՌԱՆԳԻՆ ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆԸ Ի Ս. ՅԱՎՈՐ

Գեկտ. 9-ի զշ. առաւօտուն, Ամեն. Ս. Պատրիարքը, ընկերակցութեամբ Տ. Մեսրոպ Սրբազանի, Տ. Կիւրեղ վարդապետի և Պ. Նուրեանի Քինկ Դէյւիդ պանդոկին մէջ բարի գալստեան այցելութիւն տուաւ Եթովպիոյ Գահաժառանգ իշխանին, որ, չըջապատուած իր պալատական հետեւորդներով, պատուով ընդունեց զայն:

Ն. Բարձրութիւնը, ընդունելով Ս. Պատրիարքին հրաւերը, խոստացաւ նոյն օրը երեկոյեան ժամը 5.30-ին այցելել Ս. Յակոբ և Պատրիարք բարանը: Որոշուած ժամուն տեղի ունեցաւ այցելութիւնը, Միաբանութեան կողմէ արժանափայլ ընդունելութեամբ:

Վանքին դուռը և եկեղեցւոյ գաւիթը լեցուած էին զպրոցական աշակերտներով և ժողովուրդով, ամէնքն ալ վառած մոմեր ի ձեռին: Իսկ Միաբանութիւնը, Լուսարարապետ Սրբազանի գլխաւորութեամբ, չորջառագիտաւ, պատարաս կը սպասէր երբ իշխանը եկաւ տեղեայն Հայէկ:

Հիւպատոսին և ուրիշ պալատականներու հետ, և թափօրով և շարականի երգեցողութեամբ առաջնորդուեցաւ Ս. Գլխադրի մատուռը, ուր երկրպագեց և աղօթեց:

Յետոյ առաջնորդուեցաւ դասի ատենը, ուր մասնաւոր աթոռ մը դրուած էր իրեն համար: Հոս ալ երկրպագեց և աղօթեց: Լուսարարայեւ Սրբազանը բնմէն կարգաց մասնաւոր աղօթք մը և օրհնեց իշխանը, մաղթանքներ ընելով նաև իշխանին վեհախառ ծնողաց և ամբողջ Արքայական տան համար:

Կրօնական այս արարողութենէն ետք՝ Գահաժառանգը առաջնորդուեցաւ Պատրիարքարան, որուն դռնէն զինքը զիմաւորեցին երեք Սրբազան եպիսկոպոսներ: Իսկ դաշլիճին մէջ ընդունուեցաւ Սրբազան Պատրիարքին կողմէ, որ զայն տարաւ ու բաղնեցուց իր գահուն մօտ: Մեծարանքներէ և սիրայիլ խօսակցութիւններէ ետք, Սրբազան Պատրիարքը Հայեջ կայսր Մենելիքի Ս. Աթոռոյս նստիւած սեկի խաչն ի ձեռին «Պահպանիչ»-ով օրհնեց զեռաւոր իշխանը, որմէ ետք երգուեցաւ «Հայր Մեր»ը Միարանութեան և աշակերտներու կողմէ:

Արձանագրութեան ոսկեմատենին մէջ ստորագրելէ ետք՝ Գահաժառանգը մեկնեցաւ մօտաւորապէս ժամ մը վանքին մէջ մնալէ ետք:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Երուսաղէմի Նոր Կառավարիչ Վսեմ. Մր. Կամբէլ Նոյ. Զ-ին փոխադարձ այցելութիւն տրուաւ Պատրիարքարան, և Դահլիճին մէջ ընդուն-

նուեցաւ Պատր. Տեղապահ Գեր. Տ. Մեսրոպ Սրբազանի կողմէ, որ իր հետ ունէր Հոգ. Տ. Դեորդ Վրդ. ձանպղանը, Ա. Թարգման Հոգ. Տ. Պարգեւ Վարդապետը և Դիւանայեւ Տիար Կ. Նուրեմանը: Կէս ժամ տեղ ուրախ տեսակցութենէ մը վերջ Վսեմ. Կառավարիչը մեկնեցաւ:

ՊԱՂԵՍՏԻՆԻ ՄԱՐԻԱՀԱՄԱՐԸ

Պաղեստինի մէջ, վերջին անգամ (նոյեմբեր 18) կատարուած ընդհանուր մարդահամարին համաձայն, բնակչութեան թիւն է հետեւեալը:—

	Անձ	Արու	Էգ
1. Հար. Շրջանակ՝	361,532	186,665	174,867
2. Եէմի. »	265,927	133,531	132,396
3. Հիւս. »	407,695	205,882	201,813
Ընդհ. Պաղեստին՝	1,035,154	526,078	509,076

Մարդահամարի Ընդհ. վերահսկիչ՝ Մր. Միւսի պաշտօնական յայտարարութեան համաձայն, վերոյիշեալ թիւերը առժամայ ըլլալով ենթակայ են սրբազրութեանց, մինչև որ Մարդահամարի թուղթերը միտ մի քննուին իրենց մասնաւորութեան մը: Պաղեստինի բնակչութեան թիւին վրայ տաք տարուան մէջ հարիւրին երեսունհինգ յաւելում մեղած է:

Սիմոն յաջորդ տարուան թիւերէն մէկուն մէջ պիտի տանք նաև Պաղեստինի քաղաքներու բնակչութեան թիւը, ինչպէս նաև Հայոց թիւը Ս. Երկրի մէջ:

ԿԱԹ. ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺԻ

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

Առ հասարակ ուրախութեամբ ողջունուեցաւ համագլխի Հայ Կար. հասարակութեան հոգեւոր պետին ընտրութիւնը:

Գերապայծառ Աւետիս Արքեպս. Արքիարեան Հայ Կար. կղերիկ ամեհեց կարկառուն դեմքերէն մին եր արդարեւ, արժանիով և գործունէութեամբ, և միշտ համակրանք վայելած եր հասարակութեան ներս եւ դուրս միանգամայն:

Իր պատրիարկական ընտրութիւնը գոհունակութիւն կը պատճառէ շատերուն անհաւակոյս այն տեսակէով որ ան կրնայ իրաւամբ նկատուիլ որքան իրական արժանիի մը գնահատութիւնը՝ նոյնքան նաեւ բարւոյ և սիրալիլ յարաբերութեանց գրաւական մը:

Այս զգացմամբ և վստահութեամբ և բարեմաղրանքներով «Սիոն»ի եմբարդութիւնը կը շնորհաւորէ այն բարեյաջող ընտրութիւնը: